

«ԼՈՌԻ - ՓԱՄԲԱԿ» ԵՆԹԱԽՄԻԻ ԳՈՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ մշակույթի նախարարության մշակութային արժեքների փորձագիտական կենտրոնի աշխատակից

Հայոց բնորոշ գորգերից ուսումնասիրողների և առևտրականների մի ստվար մասի կողմից առանձնակի հետաքրքրության ու ճանաչման է արժանացած գորգերի մի տիպ, որը նրանց կողմից տարբերակված է «Լոռի-Փամբակ» անվանումով **/պատկեր 1/**:¹ Դրանք մասնագետների ուշադրության կենտրոնում են հայտնվել գեղազարդման համակարգի հարստության և ինքնատիպության, հորինվածքների կառուցվածքային ամբողջականության, գունային ներդաշնակ երանգների, ինչպես նաև տարբերակների բազմազանությամբ ձևավորված յուրահատկությունների շնորհիվ: Այդ ամենով պայմանավորված՝ դրանք մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև գորգի առևտրով զբաղվողների ու հավաքածուներ կազմողների շրջանում:

Դրա գեղազարդման համակարգի հիմնական տարրը մի խոշոր խաչազարդ է, որի հորիզոնական թևերից յուրաքանչյուրն ավարտվում է կոկոնածև նախշով, իսկ ուղղաձիգները՝ դիմահայաց դիրքով պատկերված երկուական կենդանակերպ ոճավորումներով ու դրանց միջնամասում ներկայացված եռանկյունաձև ելուստով **/պատկեր 2/**: Հորինվածքի կենտրոնը հարդարված է լինում զարդով, որը կրկնվում է նաև ուղղաձիգ թևերի կենտրոնական մասում: Այս ամբողջությունն ունենում է միևնույն հիմնագույնը, լինում է բազմամիստ շրջանակում, կամ առանց դրան: Ընդհանուր առմամբ, այստեղ պատկերվածը կարելի է համարել ծաղկած խաչի մի բարդ տարբերակ, որը խորհրդավորում է մեռնող ու հարություն առնող բնությունն ու կյանքի հավերժությունը:

Այս գորգի գեղազարդման համակարգը, ըստ էության, կրում է հնամենի գորգի երբեմնի ծիսապաշտամունքային ֆունկցիոնալ այն նշանակությունը, ըստ որի, որպես մի սրբազնացված տարածք էր կարևորվում գորգադաշտը:² Թերևս այս նկատառումներով էլ հիմք ունենք այս հորինվածքով գեղազարդված գորգերին համարելու հնամենի ավանդույթներ կրող ծիսապաշտամունքային գորգի մեր ժամանակներին հասած մի տարբերակ:

Հայոց բնորոշ գորգերի գեղազարդման համակարգում այս բարդ հորինվածքը ներկայացվում է նաև երկու այլ տարբերակների տեսքով, ուստի, մենք այդ ամբողջությունը որպես մի ենթախումբ ներառում ենք «Խաչազարդ հորինվածքով» գորգերի խմբում ու այն տարբերակում ենք մասնագիտական շրջաններում ընդհանուր ճանաչում ստացած **«Լոռի-Փամբակ»** անվանումով: Մենք մեր ու-

¹ «Լոռի» ու «Լոռի-Փամբակ» տիպերը մասնագիտական շրջաններում հայտնի են նաև «Ղազախ», «Բորչալու», «Լամբալու» և այլ անվանումներով, ըստ որում, այս վերջինիս հեղինակներից Լ. Քերիմովը խաչաձև խոշոր հորինվածքն անգամ նմանեցնում է գորտի ոճավորված պատկերի: Այս մասին ավելի մանրամասն տես՝ **Raull Tschbull**, Entwicklung von vier Kasak- Mustern.- Hali, h.1. թիվ 3, 1978, էջ 257-261:

² Այս մասին տես՝ **Ա. Պողոսյան**, Գորգի ծիսապաշտամունքային նշանակության առթիվ .- ՊԲՀ, թիվ 1, 2000, էջ 182-183:

սումնասիրություններից մեկում արդեն կատարել ենք այս խմբին պատկանող գորգերի տիպաբանումն՝ ըստ որի վերը նկարագրված «**Ծաղկած խաչ**» հորինվածքով գեղազարդված տիպին տրված է ենթախմբի անունը, իսկ մյուս երկուսը տարբերակված են «**Լոռի**» և «**Փամբակ**» անվանումներով: Այժմ անդրադառնանք դրանց ծագման ու տարածման արեալներին և գեղազարդման համակարգերի կառուցվածքային առանձնահատկություններին առնչվող հարցերին:³

Հիմնական հորինվածքի տարբերակներից մեկը դարձյալ ամբողջական խաչազարդ է, սակայն ավելի գծայնացված է ու ոճավորված, ունենում է բազմանիստ ուրվագիծ և սովորաբար լրացված է լինում նաև կեռիկազարդերով /**պատկեր 3**/:⁴ Այս տարբերակով գեղազարդված գորգերը մեր կողմից տարբերակված են «**Լոռի**» անունով:

Մյուս տարբերակն իրենից ներկայացնում է հիմնական հորինվածքի միայն ուղղաձիգ առանցքը, որում առավել ընդգծված ու տեսանելի են դիմահայաց կենդանակերպ ոճավորումներից կազմված պատկերները: Կարելի է ենթադրել, որ այս հորինվածքն առավել հնամենի պատկերազրման մի արձագանք է, ու այդ առումով՝ նաև ավելի բովանդակային և ավելի ոճավորված: Այս տիպը տարբերակել ենք «**Փամբակ**» անվանումով:

Մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերի, թանգարաններում պահվող նմուշներին վերաբերող տվյալների ու առհասարակ հրատարակված նմուշների մասին եղած նյութերի համաձայն, այս երեք տիպերին պատկանող գորգերը հիմնականում գործել են Գուգարքի, Արցախի, Սյունիքի, ինչպես նաև Վանանդի ու Ջավախքի գորգագործական կենտրոններում: Դրա հետ միասին, պարզել ենք նաև, որ տիպերն ու դրանց տարբերակներն ամբողջությամբ հայտնի են միայն Լոռվա ու Փամբակի գորգագործական կենտրոններին, մի հանգամանք, որ հիմնավորված ու տեղին է դարձնում գորգերի այս խմբին ու դրանում ընդգրկված տիպերին տրված անվանումները: Կարևոր ենք համարում շեշտել, որ թեև այս գորգերը արտերկրի ուսումնասիրողները ներառել են կովկասյան գորգերի, այսպես կոչված, «**Ղազախ**» խմբում, այդուհանդերձ նրանց մեծամասնությունը նույնպես ընդունում է, որ դրանք հիմնականում գործել են այդ տարածաշրջանների հայերը:⁵

Անդրադառնալով գորգերի այս ենթախմբի տիպերի բնութագրմանը, նշենք որ, ներկայացվող տիպերից յուրաքանչյուրն իր հերթին ունի մի քանի տարբերակ:

I. «Լոռի-Փամբակ» տիպին պատկանող գորգերի գեղազարդման համակարգի բնորոշիչ տարրերն արդեն ներկայացված կենտրոնական խաչազարդն

³ **Ա. Պողոսյան**, Հայոց գորգագործական մշակույթը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին.- Հայոց ազգային մշակույթի ատլաս, երկրորդ հատոր, էջ 171-172, Եր., 2009:

⁴ Այստեղ ներկայացված գծանկարները արտանկարված են Հայաստանի ազգագրության պետական թանգարանի գորգերից, հեղինակ՝ ճարտարապետ **Կորյուն Հակոբյան**, 1981-1983 թթ: Գծանկարները պահվում են թանգարանի գիտա-օժանդակ ֆոնդում:

⁵ **Ejland L. Murray**, Oriental Rugs, New York, 1976, p. 198-210, Rites of Passage in inscribed Armenian Rugs, Edited By **Ejland L. Murray**, San Francisco, 2002, 103/Լոռի՝ Վերի շենի տարբերակ/:

ու դրա երկայնակի գազաթներից պատկերված մեկական կեռիկազարդերն են: Դաշտի մանրամասերի թվում սովորաբար «խոյեղջուր» պատկերներն ու մանր այլ զարդեր են լինում: Դրան բնորոշ գոտին գեղազարդված է լինում գալարանախշով ու գալարներից պատկերված եռամատ՝ պատառաքաղանման զարդով: Այս տիպին պատկանող գորգերի կազմում մենք առանձնացրել ենք երեք հիմնական տարբերակ:

Տարբերակ ա: Ենթախմբի ու տիպի դասական տարբերակն է, որ բնորոշվում է թիվ 2 պատկերի հորինվածքով:

Տարբերակ բ: Բնորոշվում է գեղազարդման համակարգում եղած մի քանի խաչազարդով, բացակայում են կեռիկազարդերն ու, ընդհանրապես, ծայրահեղ սակավ են լինում այլ մանրամասեր: Այս տարբերակը բնորոշ է Տաշիրի, Լոռվա, Գարդմանի ու Տավուշի գորգագործական կենտրոններին, հատկապես առանձնակի են Շուլավեր, Բուլնիս-խաչեն, Խոժոռնի, Աղբյուրփի, ճոճկան, Օձուն, Լամբալո գյուղերը:

Տարբերակ գ: Գեղազարդման հիմնական տարրը միայն մեկ խաչազարդ է, որի գազաթներին պատկերված է լինում մեկական խաչաձև վարդակ: Այս ամենն ամփոփված է լինում կեռիկներով երիզված մեկ ընդհանուր երկայնաձիգ զարդաշրջանակում /**պատկեր 4/**: Բնորոշ է Տաշիրի, Տավուշի, Լոռվա ու Գարդմանի գորգագործական կենտրոններին ու մասնավորապես՝ վերն արդեն նշված գյուղերին: Այս տարբերակն ուշագրավ է հենց այդ խաչաձև վարդակներով, որոնք լայն տեղ ունեն հայոց գորգագործական մշակույթին բնորոշ մի քանի այլ տիպերի գեղազարդման համակարգում ևս, ընդ որում, որոշների համար հանդիսանում են հիմնական հորինվածք: Ենթադրում ենք, որ, բացի վերոհիշյալ կենտրոններից, այս տիպի ձևավորման ակունքներում պետք է կարևորենք նաև Ջանգեզուրի գորգագործական կենտրոնները:

II. «Լոռի» տիպին պատկանող գորգերի գեղազարդման համակարգը հայտնի է երեք տարբերակներով:

Տարբերակ ա: Տիպի դասական տարբերակն է և բնորոշվում է **թիվ 3** պատկերի հորինվածքով: Գորգադաշտի գեղազարդումը լրացվում է նաև մանր զարդերով ու կենդանակերպ ոճավորումներով: Բնորոշ է հատկապես Լոռվա, Տավուշի, Գարդմանի ու Տաշիրի գորգագործական կենտրոններին:

Տարբերակ բ: Գեղազարդման համակարգի հիմնական տարրը դասական խաչազարդի համեմատաբար պարզունակ տարբերակն է: Բացի տիպի համար արդեն հիշատակված տարածաշրջաններից, այս տարբերակը հայտնի է նաև Ջավախքում:

Տարբերակ գ: Գեղազարդման համակարգի հիմնական տարրի՝ համեմատաբար պարզունակ խաչազարդի հետ մեկընդմեջ պատկերվում են խոշոր շեղանկյունատիպ շրջանակում ամփոփված մանր զարդեր կամ աստիճանաեզր խոշոր շրջանակում ամփոփված խոյեղջուր պատկեր, կեռիկազարդ, աստղազարդ կամ որևէ այլ զարդ /**պատկեր 5/**: Սրանք աչքի են ընկնում գեղազարդման մանր տարրերի սակավությամբ, որն ավելի տպավորիչ է դարձնում հիմնական հորինվածքների ավարտուն ու ամբողջական նկարագիրը: Մեզ հայտնի ու հրատարակված այս տարբերակի նմուշները հրատարակիչները վերագրել են հիմնականում Տավուշին, Արցախին ու մասամբ նաև Ջանգեզուրին: Մեր ուսումնասի-

րությունների աղյուսքում որպես այս տարբերակի կենտրոններ առանձնացնում ենք պատմական Ջրաբերդը, Գյուլիստանն ու Գարդմանը: Հատկապես հանրահայտ են ու իրենց յուրահատկությամբ առանձնացվող Վերի Շենում գործվածները:

III. «Փամբակ»: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այս տիպը, որը թեև ներկայացված է սակավաթիվ նմուշներով, սակայն դրանք բոլորն էլ բնորոշվում են միևնույն հորինվածքով՝ դասական խաչագարդի միայն ուղղաձիգ առանցքով, համեմատաբար փոքր չափերով, մանրամասների սակավությամբ ու նույնիսկ միևնույն լայն եզրագոտիով:

Ելնելով ենթախմբի հիմնական հորինվածքի արդեն բացահայտված տարածաշրջաններից ու մանավանդ, այդ նմուշների կատարման տեխնոլոգիական առնձնահատկություններից՝ մասնավորապես կարմիր գույնի միջնաթելի առկայությունից, կարծում ենք, որ այս տիպին պատկանող գորգերը նույնպես վերաբերում են վերն արդեն նշված գորգագործական կենտրոնների ավանդույթներին: Ասվածով հանդերձ, հարկ է խոստովանել, որ սրանց մասին մենք չունենք դաշտային տեղեկություններ՝ ուստի նաև մեր պատկերացումներն էլ այս առումով դեռևս շատ թե քիչ ամբողջական համարել չենք կարող:

Այսպիսով, այս ենթախմբին պատկանող բոլոր տիպերի գորգերի գործման հիմնական կենտրոնները Հայաստանի հյուսիս-արևմտյան պատմաազգագրական տարածքներն են, որոնց մի մասը կազմում էր 1880 թվականին ստեղծված Թիֆլիսի նահանգի մեջ մտած Բորչալու վարչական միավորումը: Անկախ այդ տարածքների պետական կամ վարչական պատկանելիությունից, դրանց բնակչության գերակշիռ տոկոսը միշտ էլ կազմել են հայերը: Մասնավորապես XIX դարի կեսերին հայերը կազմում էին Բորչալու գավառակի բնակչության ընդամենը թվի 86 %-ը, Ղազախի գավառում՝ 94,6, Շամշադինի գավառում՝ 100 %-ը:⁶ 1886թ. մարդահամարի տվյալների համաձայն Բորչալու գավառի ամբողջ բնակչության թիվը կազմում էր 101847 մարդ, որից 37732-ը հայեր էին: Բնակչության թվով երկրորդ տեղում էին մահմեդականները՝ 33037 մարդ:⁷

Դրանք այն ժամանակներն էին, երբ այդ տարածաշրջանները դեռևս գերծ էին խոշոր առևտրականների, Կովկասյան տնայնագործական միության ներկայացուցիչների, քիմիական ծագումով ներկանյութերի մանր վաճառականների այցելություններից ու գորգերն ու կարպետները գործում էին հիմնականում սեփական կարիքների բավարարման համար, այդ նպատակով ամբողջությամբ օգտագործելով միայն բնական ներկանյութեր ու տեղական բուրդ: Ընդ որում, այդ գորգերն էլ օգտագործում էին միայն հատուկ իրադարձությունների կապակցությամբ և օգտագործելուց հետո էլ հավաքում ու պահում էին բնակարանի գլխատան պատերից մեկում եղած ծալքի համար նախատեսված հատուկ խորշերում:⁸

Մենք այստեղ ավելորդ ենք համարում անդրադառնալ այս ենթախմբի գորգե-

⁶ Գ. Գ. Саркисян, Население восточной Армении в XIX — начале XX в., Ер., 2002, с. 106:

⁷ Լալայան Եր., Բորչալուի գավառ.-երկեր հինգ հատորով, հատոր 3, Եր., 2004, էջ 118:

⁸ Լալայան Եր., նշվ. աշխ., էջ 111:

րի տարածման հիմնական տարածաշրջանների՝ Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքների հայոց գորգագործությամբ զբաղվելու հարցերին ու, մասնավորապես, դրա մասին վկայություններ պարունակող ու հիմնականում 20-րդ դարի երկրորդ կեսին վերաբերող մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերին: Սակայն, ընդհանուր պատկերացում տալու համար, կարծում ենք, տեղին կլինի ներկայացնել 19-րդ դարի երկրորդ կեսի Բորչալույի հայկական բնակավայրերի կենցաղի նկարագրին վերաբերող մեկ տեղեկություն, ըստ որի՝ «ընդունված էր, որ գերդաստանի մայրը իր աղջիկներին ու հարսերին սովորեցնում էր կար ու ձև անել, կերակուրներ պատրաստել, պանիր ու յուղ պատրաստել, գորգ ու կարպետ գործել և այլն»:⁹ Այսինքն, վերը բերված փաստարկներից հասկանալի է դառնում, որ «Լոռի - Փամբակ» ենթախմբի գորգերի տարածման հիմնական կենտրոնների համարում ունեցող գորգագործկան կենտրոններում հայ հանրույթը միշտ ունեցել է համեմատական գերակշռություն ու գորգագործությամբ զբաղվելու խոր ավանդույթներ:



⁹ Լալայան Եր., նշվ. աշխ., էջ 157:



ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒ ԳԾԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

«Լոռի-Փամբակ» /տարբերակ ա/,
Գարդման-Լոռի, 19-րդ դարի երկ. կես:

«Լոռի-Փամբակ» տիպի հիմնական հորինվածք:

«Լոռի» տիպի հիմնական հորինվածք:

«Լոռի-Փամբակ» / տարբերակ գ./,
Գարդման-Տավուշ, 20-րդ դ.սկ:

«Լոռի», տարբերակ բ., Արցախ,
Վերի շեն, 1917 թ.:

О ПОДГРУППЕ КОВРОВ “ЛОРИ-ПАМБАК”

А. А. ПОГОСЯН

Среди армянских ковров особое место занимают ковры, которые характеризуются крупной крестообразной стилизованной композицией и известны под названием “Лори-Памбак”. В настоящей статье мы выделили подгруппы армянских ковров “Лори-Памбак”, в которых входят три типа ковров, основными композициями которых является вышеупомянутая композиция или ее разновидности. Представляются также варианты этих типов и ареалы их распространения.

ABOUT CARPETS OF THE SUBGROUP “LORI-PAMBAK”

A. A. POGHOSYAN

The distinguished type of “Lori-Pambak”, carpets – known in professional circles, gains an essential place among the Armenian carpets. It is distinguished by its peculiar stylized cross-formed large composition. With this report among the Armenian carpets we have separated a subtype of carpets, which includes three types of carpets with above mentioned composition and its varieties. The varieties and areas of these carpets are also represented.

ՂԱՐԱԴԱԴ

Ա. Յ. ՂԱՐԱԳՅՈՉՅԱՆ

Ղարադադը պատմական Հայաստանի բարձրադիր լեռնային շրջաններից մեկն էր: Արևմուտքից նա պարսպված է Սիլյան սարի, իսկ հարավից և արևելքից՝ Ղարադադի (իմա՝ Հայկական) և Հաշտասարի լեռնաշղթաներով¹: Յուսիսարևելյան սահմանն էր Արաքս գետը:

Այս բնաշխարհագրական շրջանը պարփակող լեռները հանդիսանում են բնական պատնեշ լեռնագավառի համար, ուր կարելի էր մուտք գործել Դրունք Հայոց լեռնանցքով: Անառիկ այդ տարածքը ժամանակին ամրացվել է նաև բերդամրոցներով, որոնք հուսալիորեն պաշտպանել են ազգաբնակչությանը թշնամական հարձակումներից: Դրանցից կարևորներն էին Թավրիզից Ղարադադ տանող ճանապարհին կառուցված Բուրգեր կամ Աղջաղալա բերդը² և Ղարադադից դեպի Մեծ Ղափան³ տանող ճանապարհին գտնվող Կուր-Դեշտ ամրոցը:

¹ Հաշտասար տեղանվան մեջ առկա է հին հայերենի յաշտ («Կուռքերին մատուցվող գոհ») բառը, որը փոխառություն է պահլավերենից (Յ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1977, էջ 383):

² Յ. Հովսեփյան, Ղարադադի հայերը, I, Ազգագրություն, Երևան, 2009, էջ 80:

³ Ըստ պարսկական աղբյուրների՝ Ղափանաթ (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 190, ծան. 116: Ընդգրկում էր Տաթևի թեմի 14 գավառների (տե՛ս ժամանակա-